ՀԱՎԵԼՎԱԾ N 36
ՀՌՀ գլխավոր քարտուղարի
03.01.2022թ թիվ 2-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի տեսալսողական մեդիայի գործունեության վերլուծության և մեթոդաբանության բաժնի պետ (ծածկագիրը՝ 44-20.2.6-Ղ4-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) տեսալսողական մեդիայի գործունեության վերլուծության և մեթոդաբանության բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետը հաշվետու և անմիջական ենթակա է Հանձնաժողովի նախագահին, անմիջական հաշվետու է Հանձնաժողովի գլխավոր քարտուղարին (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար):

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին ենթակա և հաշվետու է Բաժնի ավագ վերլուծաբանը:

1.4 Փոխարինող պաշտոնի անվանումը

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ վերլուծաբանը:

1.5 Աշխատավայրը

Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Իսահակյան 28

2. Պաշտոնի բնութագիրը

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Իրականացնում է Հանձնաժողովի գործունեությանը և լիազորություններին համապատասխան իրականացված բոլոր բաղադրիչների վերաբերյալ ամբողջական տեղեկությունների և վիճակագրական տվյալների ուսումնասիրման մեթոդաբանության կազմումը (մշակումը).
2. ապահովում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների և օպերատորների կողմից Հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության վերլուծությունը.
3. ապահովում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից մեդիա

ոլորտի վիճակագրական աշխատանքների իրականացման նախագծումը, կազմակերպումը և վերահսկումը.

4. ապահովում է դիստրիբյուտորների ներկայացված տեղեկատվության հիման վրա օտարերկրյա և հայերեն տեսալսողական ծրագրերի համամասնությունների վերլուծումը.
5. ապահովում է Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված տեղեկատվության վերլուծության իրականացումը.
6. ապահովում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, օպերատորների և դիստրիբյուտորների ներկայացված տեղեկատվության վիճակագրության վարումը.
7. ապահովում է Հանձնաժողովի մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից վիճակագրական տվյալների ստացման վերաբերյալ հարցաշարերի պատրաստումը և կատարելագործումը.
8. Հանձնաժողովի նախագահին ներկայացնում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, օպերատորների և դիստրիբյուտորների վերաբերյալ վերլուծական տվյալների հաշվետվությունը.
9. ապահովում է Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների բարելավման առաջարկություններ՝ հիմք ընդունելով հավաքագրված վիճակագրական տվյալների ներկայացնումը.
10. իրականացնում է տեսալսողական մեդիայի ոլորտի վիճակագրական տեղեկատվության ապահովումը՝ տեսալսողական ոլորտի քաղաքականության մշակման համար.
11. ապահովում է տեսալսողական մեդիայի ոլորտի վիճակագրության պատշաճ կատարման խոչընդոտների վերհանման աշխատանքների իրականացումը և լուծման առաջարկների ներկայացումը.
12. ուսումնասիրում է տեսալսողական մեդիա ոլորտի միջազգային փորձը և ներկայացնում է համապատասխան առաջարկներ Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքների բարելավման նպատակով.
13. ապահովում է տեսալսողական մեդիա ոլորտին վերաբերվող օգտակար հոդվածների, հրապարակումների, գրքերի, գիտական աշխատությունների շտեմարանի վարումը:

Իրավունքները՝

- Հանձնաժողովի նախագահից, Գլխավոր քարտուղարից ստանալ անհրաժեշտ տեղեկություն՝ վերլուծական աշխատանքների իրականացման ուղղությունների վերաբերյալ.
- Հանձնաժողովի կառուցվածքային այլ ստորաբաժանումներից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, փաստաթղթեր, տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, օպերատորների և դիստրիբյուտորների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը.
- մասնակցել Բաժնի գործառույթներին առնչվող խորհրդակցություններին,

աշխատանքային քննարկումներին:

Պարտականությունները՝

- նախանշել տեղեկատվության և վիճակագրական տվյալների ուսումնասիրման մեթոդաբանությունը, վերլուծական աշխատանքների ուղղությունները. ուսումնասիրել և վերլուծել տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, օպերատորների, դիստրիբյուտորների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը, հեռարձակված տեսալսողական ծրագրերի վերլուծության վերաբերյալ եզրակացությունները, տեղեկանքները, հաշվետվությունները՝ ըստ թեմատիկ ուղղվածության, ըստ՝ տարբեր բաղադրիչների, ժամանակահատվածների, բազմակարծության ապահովման, հավասարության պահպանման, օտարերկրյա և հայերեն տեսալսողական ծրագրերի համամասնությունների, ըստ արձանագրված խախտումների, հարուցված վարչական վարույթների, կիրառված վարչական տույժերի.
- ստուգել վիճակագրական տվյալների հավաքագրման համար նախապատրաստված հարցաշարերը, անցկացված հարցումների արդյունքները, ներկայացված առաջարկները.
- ուսումնասիրել տեսալսողական մեդիա ոլորտի միջազգային փորձը, շտեմարանի նյութերը և ներկայացված առաջարկները.
- նախապատրաստել տեղեկանքներ, հաշվետվություններ, եզրակացություններ, զեկուցագրեր, գրություններ և մեթոդական ուղեցույցներ: Հանձնաժողովի նախագահին, Գլխավոր քարտուղարին Բաժնի գործառույթներից բխող առաջարկություններ ներկայացնել:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1 Կրթությունը, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի իր գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վիճակագրության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4.Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Փոփոխությունների կառավարում
2. Բանակցությունների վարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ:

.